

SUMMARY

In the Ottoman Empire, Turks manifested in their coexistence with Armenians a negative attitude to, treatment of and action regarding the “others” self-identity - accompanied by mass killings and massacre, robbery, deportations and ethnic cleansing, genocide and destruction of Armenians’ homeland. In contrast to such barbaric and destructive demonstration of self-identity in coexistence with “others,” the Armenians’ attitude to and coexistence with “others” are fundamentally different, caring and tolerant. That attitude is manifested also in the works of Armenian historians, specifically in the works of Moses Khorenats’l, as laudatory concerning genuinely civilizational thoughts, words and actions of “others”.

His ‘History’ contains a conceptual framework for spiritual-civilizational consolidation of the Armenian identity containing the ideas of a causal link between the “internal” and “external” and of the virtues of improvement of the self and lifestyle.

This conceptual framework is still essential for overcoming the consequences of the Armenian Genocide and for effective development of the nation and the state.

Key words: genocide, self-identity, coexistence, “others”, civilizational conceptual framework.

ՀԱՅՈՑ ԻՆՔՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ԵՎ ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐԶՐՈՒՄԵՑՈՒ ԳԻՏԱՍՏԱԿՈՒԹՅԱՅԻՆ
ՈՒ ԲԱՐՈՅԱՀՈԳԵՎՈՐ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Ներսէն Քոչարյան
Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ասպիրանտ

XVI-XVII դդ. հայոց հայրենի բնաշխարհը Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև տեսական պատերազմական գործողությունների կենտրոնաւուելի էր՝ երկուստեր նկատվելով որպես իրենց իշխանապետության հաստատման շահադիտության առարկա. Վանք, երգումը, Կարսը... ձեռքից ձեռք էին անցնում և յուրաքանչյուր մարտնչող կողմ հակառակորդի դեմ վարում էր «այրված» տարածքի քաղաքականություն։ Հայ ազգն իր հայրենի կենսատարածքում սեփական պետականություն։ Հայ ազգն իր հայրենի կենսատարածքում սեփական պետականություն անկումից հետո, դարեր շարունակ չունենալով այլև ազգային պետություն, որը պետք է ապահովեր արտաքին անվտանգությունն ու կյանքի բարեկարգությունը, գտնվում էր

քաղաքական, իրավական, տոցիալական ու տնտեսական ծանրագույն վիճակում և լիովին ոչնչացման վտանգի էր ենթակա հայոց ինքնությունը. կենսազոյությունն ու մշակույթը: Հայերը ենթարկվում էին զանգվածային սպանդի ու կողոպատիի, բռնի տեղահանվում, բնակավայրերն ավերվում ու ողջ անշարժ գույքը՝ ներառյալ արտերն ու այգիները այրվում, և այսկերպ ստիպյալ փախչում ու պատապարվում էին լեռնային անձավներում, գաղթում դեպի Կոստանդնուպոլիս, Շուտաստան, Ղրիմ, Լեհաստան¹: Զինվորական ու ավագակային անվերջ կողոպատները, քրիստոնյաների ու հատկապես հայերի նկատմամբ հայածանքները, պետական անհավասար իրավաբարության պայմաններում ծանր հարկերը, ենչերության ուղղօրդված մանկահավաքը, վարչակառավարական համակարգի ներկայացուցիչների կաշառակերությունը խափանել էին Օսմանյան Կայսրության ներքին և արտաքին առևտուրը, արյունաբերական, կրթական և մշակութային զարգացումը: Նշենք նաև, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում XVII-XVIII դդ. հայերի կացությանը նախորդող ու նշանակալի XVIII դ. երկրորդ կեսի քաղաքական պատմության վերաբերյալ կան սակայ տեղեկություններ²:

Հռոմի պապի կողմից ուղարկված միսիոներները ջանում էին կաթոլիկությունը տարածել Մերձավոր Արևելքում, և քանի որ մահմեդականների դավանափոխության հարցը որևէ դրական արյունքի չէր հասնում, նրանց գործունեությունն ուղղորդվում էր տեղի քրիստոնյա բնակչության՝ հայերի կաթոլիկության դավանափոխությանը: Նրանք օգտվում էին այն իրավիճակից, որ հայերը գունվում էին երկողմանի լի տակ և հաճախ կանգնած էին ծանրագույն ընտրության առօն ֆիզիկական բնաջնջում կամ բռնի մահմեդականացում: Եվ հայերի համար մի կողմից քրիստոնյա մնալը, մյուս կողմից՝ զորավոր պաշտպան ձեռք բերելը ի դեմս կաթոլիկ Հռոմի, ստիպում էին հայերին ընդունել կաթոլիկություն³:

¹Տե՛ս Զուլայյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Եր., «ՀՍՍՀ ԳԱ» իրատ., 1980, էջ 59-62:

²Տե՛ս և Առյուն տեղում, էջ 73:

³Տե՛ս Զուլայյան Մ. Կ., Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գ. Ա (քաղաքական պատմություն), Եր., «ՀՀ ԳԱ» իրատ., 1990, էջ 180-181:

Առկա էր հայոց կենսագոյության վտանգվածություն մինչ ի մահ և կամ անինքնություն։ Առաջինի «հայոց կենսագոյության մինչ ի մահ վտանգվածության», պատճառն ու հիմնական գործոնները Օսմանյան կայսրության ու Սեֆյան Պարսկաստանի հետ արտաքին պատերազմական, թրքապատկան ցեղախմբերի ու նաև քրդերի հետ և արտաքին, և ապատամբական ներքին՝ տարաբնույթ ու բալորատեսակ ռազմական գործողությունների ու ասպատակությունների ընթացքում մշտական նախահարձակություններով բնիկ հայ քրիստոնյաների ունեցվածքի թալանը, զերեվարությունը, կանանց ու երեխաների վաճառքը, զանգվածային կոտորածներն ու բնաջնջումն էր, ինչպես նաև Կայսրությունում հայերի նկատմամբ բուրքերի տնտեսական, տղյալական... դիսկրիմինացիոն ներքին քաղաքականությունը։ Իսկ երկրորդի՝ «հայոց կենսագոյության դեպի անինքնություն վտանգվածության» պատճառն ու երեք գործոններն էին հայոց հոգևոր ինքնության ու քրիստոնեական առաքելական անաղարտ հավատի»

ա) բոնի ուրացությունն ու մահմեղականացումը,

բ) կարողիկության դավանափոխությունը,

գ) կրրության հնարավորությունների նվազությամբ ու բացակայությամբ հայոց լեզվին բանավոր ու գրավոր տիրապետելու կարողության անկման հետևանքով «հայ գրականությանը», հայոց քաղաքակրթական-հոգևոր-պատմական ինքնության, կյանքի ու մշակույթի որպիսությունը հայտնող «հայոց պատմությանը» հաղորդակից լինելու և իրեն այդ ինքնությանը նոյնորոշելու (իդենտիֆիկացնելու) դժվարությունը և ուրեմն քաղաքակրթական-մշակութային-հոգևոր իր այդկերպ խոցելիությամբ ինքնությունը կորցնելու, ուժացման ստիպյալ կենսապայմանները ու կրթապայմանները, որոնց արդյունքով և բոնի թրքացման ու քրդացման մերձավտանց ու նաև հեռավտանց սպառնալիքն ու կացությունը։

Թվարկյալ երկու խումբ գործոններով հայոց կենսագոյության վտանգվածության կացությունում ու սպառնացող հեռանկարում Խաչառուր Էրզրումեցին, որպես անհատ անձ ու կաթոլիկ վարդապետ, իր ունակություններին և ուսմամբ ձեռքբերյալ կարողություններին աղեկասությամբ, գիտա-հոգևոր իր իմացությամբ ու հոգևոր փորձառությամբ զարդարյալ ներկրյայլ և ուսյալ հոգու ընտրությամբ ու նվիրումով նախաձեռնում ու կենսագործում է հայոց կենսագոյությանը հոգեկեցուց ու կենարար նշանակալիություն ունեցող և հենց քաղա-

բակրթող հոգևոր-լուսավորչական, հայոց ինքնության ու կենսակերպի քաղաքակրթական ու քարոյական կատարելագործմանն ուղղված և ստեղծագործական ու հոգևոր-գիտական, և կրթական գործունեություն: Նրա այսկերպ ընտրությունը, նվիրումը, նախաձեռնությունն ու արդյունավետ կատարումը որոշակի իմաստով ներկայանում է որպես ոսկիիրա, նախակարապետ հայոց կենսագոյության հիմնորոշ խնդիրների աղեկվատ ու տվյալ ժամանակաշրջանում հնարավոր լուծման ուղղությամբ, որ և վարդապետին օրինակյալ՝ համախոհությամբ ձեռնարկվեց, շարունակվեց և հենց գուգակցարար կենացգործվեց հայոց կանոնու Վենետիկի Միջիարյան Սիաբանության հոգևոր-գիտական և բարոյա-կրթական հոգևոր-լուսավորչական ու քաղաքակրթական գործունեությամբ:

Խաչատուր Էրգորումեցին հայոց պատմա-հոգևոր ինքնությունը կաթողիկ դավանակիոխությամբ իր նախնյաց հետ քրիստոնեան հոգևոր ու պատմական միասնությունից կտրելու ու անիքնության ուղղորդելու մեջ չեր տեսնում հայոց ինքնության ու կենսագոյության վտանգվածության բազմաբովանդակ հիմնախնդիրի ելքն ու իր բուն «անելիքը», ինչպես կարելի է նկատել հոգևոր ոլորտում իրենց կարիերայի ու պաշտոնի մոլությանն անձնատուր անձանց պարագայում: Նա իսկական հայրենասեր ու ազգասեր մի անձ էր, որ նույնիսկ մերժելով Միջիար Մերսատացու առաջարկը նախաձեռնել Միջիարյան միարանության ստեղծումը և ապա ստանձնել դեկավարումը⁴, իրեն նվիրել էր միայն գիտա-ստեղծագործական ու կրթական գործունեության, որն այնքան անհրաժեշտ էր տեսնում ազգային խնդիրների լուծման ներկայում ու հեռանկարում: Օսմանյան կայսրության իշխանության ներքո, իսլամ դավանող թրացեղ ազգախմբերի ու քրդերի հետ գոյակցության ու իրավականորեն անհավասար կենսապայմաններում իրենց հայրենի կենսատարածքում հայ ազգի ինքնապահպանաման և քրիստոնեական քաղաքակրթական-հոգևոր ու բարոյական զարգացման համար, ըստ Խաչատուր Էրգորումեցու, առաջնային ու կարևորագույն նշանակություն ուներ հայոց լեզվի ուսուցանությունը, և ահավասիկ՝ 1696թ. նա Խոտավիայում (Լիվոռն) նորաբաց հայկա-

⁴Տե՛ս Քոչարյան Ն., Խաչատուր Էրգորումեցու կյանքը և ստեղծագործական գործունեությունը/«Փիլիսոփայությունը արդի աշխարհում» UNESCO-ի Փիլիսոփայության միջազգային օրվա կապակցությամբ գիտաժողովի նյութեր, գ. IV, Եր., «Լիմուշ» հրատ., 2014, էջ 81:

կան տպարանում հրատարակում է «Գիրք Քերականութեան» աշխատությունը: Հայ ազգի «քրիստոնեական քաղաքակրթական-հոգևոր, զիտա-մշակութային լրասվորչական ու բարոյական ուսման և ներկատարելագործմամբ զարգացման»՝ Խաչառուր Էրզրումեցու ծրագրային հայեցակարգը կենագործվում է զիտա-ստեղծագործական գործունեությամբ՝ քերականական, քարոզչութական, ճարտասանական, բազում զիտությունների ու արվեստների հիմունքները, իդեաներն ու բովանդակությունն իրենում սահմանող, բացորշող ու վերահիմաստավորող իմաստափական, տեսական ու գործնական աստվածաբանական, մեկնողական երկերի հրատարակմամբ՝ զուգորդվելով ծիսական դպրոցում ու եկեղեցում իր գործնական ուսուցման կրթական գործունեության հետ: Վենետիկի Սիմֆրայան միաբանությունն իր հիմնադրումից ի վեր ժամանակաշրջանի ու հայոց ինքնության, կենսագոյության ու մշակույթի վտանգվածության խնդիրների աղեկվատ լուծմանը նվիրյալ հոգածությամբ ծավալում է իր քրիստոնեական քաղաքակրթական-հոգևոր ու բարոյական, զիտամշակութային լրասվորչական գործունեությունը նույն այս ուղղություններով, այս ամենի հետ մեկտեղ խորությամբ առավելացնելով բանասիրության ու պատմության ձյուղերը:

Էրզրումեցու քաղաքակրթական-լուսավորչական հայեցակարգում առանցքային նշանակություն ունի զիտամշակութային տեսական և բարոյական-գործնական կրթությունը: Ըստ անտիկ հունական և ապա՝ միջնադարյան քրիստոնեական իմաստափակրթյան ավանդույթի ու նաև Խաչառուր Էրզրումեցու իմաստափական հայեցակարգի, բարոյագիտությունը գործնական փիլիսոփայության մաս է, որն իրենում ևս ունի որոշ շափով տեսական ճանաչում է բարին և արդեն որպես իսկ գործնական գործում է բարին, մարդկային բարքերն ու վարքը, ներքինն ու արտաքինը կրթելով առաքինակարգ շափակորության հաստատելով բարի կարգավիրություն և այս առումով՝ հենց բարեկարգություն: Նրա վարդապետության համաձայն՝ իմաստության ձգտող և բարոյականությամբ իր ներքին ու արտաքին կյանքի ինքնամաքրումը կամեցող յուրաքանչյուր ոք անհրաժեշտաբար անցնում է մի շաքք փուլեր սուրբ հայրերի գրվածներին ծանոթացումն ու ըստ այդմ իր կենսակերպի ուղղորդումը, սրբերից խրատի ուսանությունն ու իմաստուններին որպես օրինակ հավանումն ու հետեւումը, երկշոտության հաղթահարումը և անկարգ փափազների ու

բաղձանքների սանձահարումը⁵: Նրա սոցիալական հայացքներում բարոյականությունը բանականությամբ կազմակերպվող մարդկային վարքի և բարքի, արտաքինի ու ներքինի աստվածային պատվիրաններով կարգավորվածությունն է և որպես այդպիսին հիմնարար դեր ունի հասարակության կյանքում: Նա բարոյականությունը սահմանում է որպես մարդու «բարոյական գիտություն և վարքական իմաստություն, ի վարս մեր վերահայի, և ի բարս մարդոյ նայի»⁶: Բարոյազիտությունում նա քննարկում է երջանկության, սիրո, առաքինության և դրանց հասնելու ճանապարհներն ու խոշընդուները, մարդկային փոխհարաբերությունների հիմքերը, կամա և ակամա գործողությունները: Բարոյականությունը զուգորդվում է իրեն բնորոշող մարդկային ունակությունների և կայացած(-ող) հասկությունների բարենշանակ ուղղորդվածությամբ ու բովանդակությամբ: Այդպիսիք են կամքը և առ բարին կամավոր, նույնն է թե հոգարակամ ընտրությունը, դիտավորությունն ու կատարումը, առ բարին մարդու բնական ու նաև բանական ձգուումը, բարու ճանաչումն ու գործումը իր ու այլոց ներքին ու արտաքին կյանքում՝ ինքնությունում ու կենսակերպում ներկայավորումը, չարի որպես բարու նվազում ճանաչումը, ժխտումն ու կյանքում բացարկումը, երջանկության և երանության բնական ու նաև բանական ձգուումը, իսկությամբ ճանաչումն ու ատհնքնող գործունեությունը, մարդկային հոգու և մարմնի միասնությունում՝ հոգու գերակայությունը և այլն: Էրգորումեցին «բարոյականության» իրողություններն ու առնչվող խնդիրները վերլուծում է մարդկային բանական հոգին ու միտքը առ բարին ուղղորդման տեսակետից քննարկելով բարու և չարի, առաքինությունների և մեղքերի, բարեմասնությունների և արատների հակոսնյա կատեզորիաներով: Նրա վերլուծություններում բարին բնորոշվում է որպես Աստվածային կամքի համաձայն կազմակերպված մարդկային խոսքի, մտքի, գործի համալիր արտահայտություն: «Զի հանապազ ստանայցեմք, և զբարիս հավաքիցեմք: Արարք երիւր կերպիւր լինին. մտօր, բանիւր, գործովք լինին: Համայն կերպիւր զմեզ ուղղեսցուր. Զուղիդ արարս իրակեսցուր: Զի համայն կերպիւր ուղղիցեմք. և իսկ բարիք գտանիցիմք»⁷: Իսկ չարը սահմանվում է որպես ունայնություն, խավար, անմտություն. «Արդ չարութիւն

⁵Տե՛ս նոյն տեղը, էջ 353:

⁶Խաչատուր Էրգորումեցի, Համառու Խմաստափրութիւն, Հ. 1, Վենետիկ, 1711, էջ 343:
7Նոյն տեղում, էջ 348:

ոչնչութիւն. Քանզի բանի պակասութիւն... Ամեննին ոչինչ դնի. վասնզի ոչինչ գուանի... Ուրեմն ոչինչէ չարութիւն. ամեննին ունայնութիւն»⁸:

Նրա խորհրդածություններում յուրաքանչյուր բարոյական կատեգորիա սահմանվում է բացահայտելով հասկացվող ու մեկնորոշվող «իրի» բնությունը, և բաժանվում՝ այդ կերպ հայոռորշելով «իրի» տիպաբանությունը, բաղադրակազմը: Բարոյական իրողություն իրենցում հասկացող ու արտահայտող կատեգորիաների սահմանման, որով և՝ այդ «իրի» բնության բացահայտման, և բաժանման, որով և՝ «իրի» տիպաբանության հայոռորշման, նշանակալի օրինակ է «Երջանկութեան» որպես «առաջինութեան» արտահայտություն, էրզումեցու ըմբռնումն ու մեկնաբանությունը: «Երջանկութիւն երանութիւն, երանական վայելչութիւն... Երջանկութիւն է բարութիւն և ծայրագոյն վայելչութիւն... Մարդ ընդունակ երջանկութեան և ծայրագոյն վայելչութեան: Վասնզի մարդ իմացական և նաև կամեցդղական: Վասն որոյ մոլոք իմանայ, կամօք սիրե, ուրախանայ, Երբ ծայրագոյն բարին խորի և ի վերայ նորա երձուի»⁹: Նրա քրիստոնեական իմաստախրությունում երջանկությունը մեկնորոշվում է երկու տեսանկյուններից: Երջանկությունը լինում է գերբնական ու կատարյալ, բնորոշվում է աստվածասեր ու մարդասեր կյանքով, որում և՝ Աստծո ճանաչողության ձգուումով ու պատվիրանների կատարմասք, որպես Աստծո եետ սիրով միասնացյալ գոյությամբ երճվանք ու եենց սքանչացում, որը հատուկ է աստվածաբաններին, իմաստասերներին: Երջանկությունը լինում է նաև բնական ու ոչ-կատարյալ բնորոշվելով արտաքին շափորոշիչներով, ինչպիսիք են համբավը, պատիկը, իշխանությունը, ունեցվածքը: Այդ բնույթի «իրաց» նկատմամբ ձգուումը, հասնելու և ապա արդեն նաև զրկվելու հնարավորության մասին մտորումները ոչ թե մարդուն հասցնում են երջանկության, այլ՝ առաջանաւում իսուվը, անհանգստություն, տագնապ: «Քանզի ստացեալ չարշարէ, և ոչ ստացեալ չարշարէ: Յորժամ ստանի չարշարէ, զերկյուղ կորստեան պատճառէ...»¹⁰: Եշանկության արտաքին բնույթի շափորշիչները առաջնային չեն մարդու «ինքնությամբ կենալու», այն է՝ իր աստվածապատկեր ու աստվածանման ինքնությանը հարազատ կենալու

⁸Նույն տեղում, էջ 349:

⁹Նույն տեղում, էջ 351:

¹⁰Նույն տեղում, էջ 353:

համար, ժամանակավոր են և, ինչպես ասվում է Ավետարանում, ցանկացած պահի կարող են հափշտակվել գողի կողմից կամ քայրայման ենթարկվել ու ոչնչանալ: Մարդն իր երջանկությունը պետք է որպնի և զոնի անանց արժեքների մեջ: Երջանկություն ասելով՝ Երզրումեցին հասկանում է ոչ թե անցողիկ մարմնական հաճույքներն ու նյութական բարիքները, այլ՝ Աստծո ներկայությամբ ու հոգևորաբար ապօռվող կապով՝ մարդու հոգևոր սքանչացումը, ինչպես նաև բարենշանակ գործերի առնչությամբ հոգևոր բավարարվածությունը, բարոյական մի զգացում, որն առաջանում է իրականացված պարտքի պարագայում:

Երզրումեցու հայեցակարգում հետազոտելով «բարոյականության» հասկացությունը, կոնտենտ վերլուծության արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը: Բարոյականության ողջ խնդրակարգը նաքննարկում է Համառոտ իմաստասիրություն աշխատության «Յաղագ Բարոյականութեան» բաժնի 34 գլուխներում, որոնցում բառերի ընդհանուր բանակը կազմում է մոտ 18105: «Բարոյականություն» կատեգորիան վերլուծելիս, առանձնացրել ենք հետևյալ ցուցիչները՝ բարի (իմաստասեր, բարեկարգ, բարեսեր, ճշմարտասեր), չար (չարասիրություն, չարագործություն, ունայնություն, անմտություն, դատարկություն), ախտեր (ազահություն, հպարտություն, բղախոհություն, ծուլություն, բարկություն) և նրանց «դեղ» հանդիսացող առաքինությունները (առատաձեռնություն, խոնարհություն, ողջախոհություն, ջերմեռանդություն, հեզություն, պարկեշտություն), երջանկություն (երանություն, ճշմարտություն, իմաստասիրություն): «Բարոյականության» կառուցվածքային բաղադրիչներին համապատասխանող իմաստներն արտահայտող բառերի կրկնության հաճախականությունը հետևյալն է՝

բարի (իմաստասեր, բարեկարգ, բարեսեր, ճշմարտասեր) 77,

չար (չարասիրություն, չարագործություն, ունայնություն, անմտություն, դատարկություն) 84,

ախտ/մեղք (ազահություն, հպարտություն, բղախոհություն, ատելություն, բարկություն, ծուլություն) 53,


առաքինություն (առատաձեռնություն, խոնարհություն, հեզություն, ջերմեռանդություն, պարկեշտություն, ողջախոհություն) 76,

երջանկություն (երանություն, ճշմարտություն, իմաստասիրություն) 122:

Արդյունքում «բարոյականության» կատեգորիայի ցուցիչների կրկնության հաճախականությունը 412 անգամ է, որը կազմում է ընդհանուր բառերի 2,3 %:

Ցուցիչների կրկնման հաճախականությունը (ըստ ամբողջ թվի)

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Քանակական վերլուծության հետ մեկտեղ՝ նաև բովանդակային քննությամբ հայտորոշվում է, որ ըստ Խաչատուր Էրզրումեցու, առաքինություններն են առաջնորդում և ուղղորդում մարդկանց դեպի երշանկություն ու երանություն: Լինելով երանությանը հասնելու նախապատրաստություն, առաքինությունները կրթում են մարդկային բանական հոգին ու կյանքը իմաստության ու բարեկարգության: Ազատ կամքն ու բանականությունն են հնարավորություն ընձեռում կազմակերպել սեփական կյանքը բարու ուղղությամբ, կրթելով բարքը և կատարելով արարքներ, որոնք ընդունելի և համապատասխան են մի կողմից Աստծո պատվիրաններին, մյուս կողմից՝ մարդկանց ավանդություններին և նորմերին: Հետևելով Պլատոնին, Էրզրումեցին առանձնացնում է մարդուն բնորոշ չորս տեսակի առաքինություններ՝ խոհեմություն, արիություն, ողջախոհություն, արդարություն: Մարդկային բանական միտքը կրթվում է բարեսեր խոհեմության, ազատ կամքը՝ նույնորեն բարեսիրության ու արդեն հոժարակամորեն՝ կարիքների բավարարման օրինավոր միջոցների ընտրության, ցասումի արիությամբ վերահսկման՝ արհամարհելով սնոտի վախերը և հաստատելով բարի գործերում հաստատակամ ու աննկուն քաջարիությունը:

թյուն, ցանկությունների՝ ողջախոհությամբ չափավորման և արդյունքում մարդկային հոգու եռամասնյա բաղադրակազմի՝ խոհեմայցալ մտքի, արիացյալ կամքի ու զգացմունքի և ողջախոն ցանկության՝ արդարությամբ փոխհարդարյալ ուղղողության ու գործառնման:

Խաչատուր Էրզրումեցին իր գործնական իմաստափրության մեջ ներկայացվող բարոյագիտական, սոցիալական ու քաղաքական հայացքներում¹¹ մարդկային կյանքի ամենայն իրողություններում սկզբունքային հետևողականությամբ հետամուտ է և մատնացուց է անում բարոյական կարգավորություն: Այդ կերպ նա իր երկում քաղաքակրթական, հոգևոր ու հենց գործնական խնդրում ներկայացնում է հասարակական կյանքի՝ իր ամենայն բաղադրատարքերով բազմաբարձրակ միասնականության՝ բարեկարգությանը նպաստականէն համընդգրկուն ացիալական տեսություն: Ուսանելով անտիկ մտածողների, միջնադարյան քրիստոնյա սուրբ հայրերի և հենց սույն հետազոտության խնդրո նյութ 18-րդ դարի հայ կաթոլիկ վարդապետ և բազմաբնույթ իր ստեղծագործություններում ու դրանցում հետազոտվող խնդիրներում հանրագիտակ Խաչատուր Էրզրումեցու գործնական իմաստափրությունում ներկա բարոյագիտական, սոցիալական ու քաղաքական հայացքներ, կարելի է ամրագրել «բարոյականության» բուն էությունը բացահայտող մտքի հետևյալ բանաձևը: Բարոյականությունը մարդկային մտքի, հոգու, կյանքի, որոնցում հենց բարքի ու վարքի առաջինություններով «զարդարված» բարեկարգությունն է: Իսկ արտահայտվելով նաև ժամանակակից սոցիալական գիտությունում իր հաստատումը գտած հասկացությաին եզրարանությամբ կարելի է ասել, որ բարոյականությունը մարդկային ներքին ու արտաքին կյանքի առաջինի կարգավորությունն է, կենարար ու հոգեկեցուց նշանակություն ունի և այդպիսի կարգավորություն է հաղորդում անձանց, խմբերի, ազգերի, ժողովրդի ու հասարակության մարդկային ինքնությանը և համակեցությանը:

Խաչատուր Էրզրումեցին, յուրացնելով եվրոպական քաղաքակրթական մտքի անտիկ, միջնադարյան ու նաև իր ժամանակաշրջանի

¹¹Քաղաքական հայացքների մասին տե՛ս Քոչարյան Ն. Խաչատուր Էրզրումեցու փիլիսոփայա-քաղաքական հայացքները «Համաօտական իմաստափրութիւն» աշխատությունում//«Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., «ԵՊՀ» հրատ., 2014, էջ 155-158:

տեսական ու գործնական իմաստավիրության և, մասնավորապես, սոցիալական մտքի, որում և բարոյագիտության լավագրվյան ավանդույթները, հետամուտ էր հայոց ազգային ինքնության ու կենսակերպի քաղաքակրթա-հոգնոր ու բարոյական, կատարելագործմանը նպաստելով հայ ժողովրդի ազգային ինքնազիտակցությանն ու կրթության նկատմամբ ձգտմանը, եվրոպական մշակույթի արժեքների հասանելիությանը:

ԱՍՓՈՓՈՒՄ

XVII-XVIII դդ. Օսմանյան կայսրությունում հայոց ինքնության ու գոյության հիմնախնդիր աղեկվատ լուծմանն էր ուղղված Խաչառուր Էրզրումեցու քաղաքակրթական-լուսավորչական, գիտամշակութային ու բարոյահոգնոր ստեղծագործական ու կրթական գործունեությունը: Ազգային հոգնոր ինքնության պահպանության, ինքնազիտակցության ու կենսակերպի քաղաքակրթական զարգացման համար էական նշանակալիություն ունեն նրա բարոյագիտական հայացակարգը, որում ներկայացվում է հասարակական կյանքի՝ իր ամենայն բաղադրատարրերով բազմաբռնդակ միասնականության՝ բարեկարգությանը նպատակամետ համընդգրկուն սոցիալական տեսությունը:

Բանալի բառեր ինքնություն, գոյություն, բարոյականություն, հոգնոր, բարոյագիտական հայեցակարգ:

ПРОБЛЕМА САМОСТИ И СУЩЕСТВОВАНИЯ АРМЯН И НАУЧНО-КУЛЬТУРНАЯ, МОРАЛЬНО- ДУХОВНАЯ ЦИВИЛИЗАЦИОННАЯ КОНЦЕПЦИЯ ХАЧАТУРА ЭРЗРУМЕЦИ

Нерсес Кочарян

Аспирант Армянского государственного
педагогического университета им. Х. Абояна

РЕЗЮМЕ

Цивилизационно-просветительская, научно-культурная, морально-духовная, творческая и образовательная деятельность Хачатура Эрзрумечи была направлена на адекватное решение проблемы самости и существования армян в Османской империи, в XVII-XVIII вв. В деле сохранения национально-духовной самости, а также цивилизационного развития самосознания и образа жизни, большое значение имеет его этическая

концепция, в которой представлена всеохватывающая социальная теория общественной жизни, со всем многогранным единством её структурных элементов, направленная на благоустройство общества.

Ключевые слова: самость, существование, мораль, духовное, этическая концепция.

THE ISSUE OF ARMENIAN IDENTITY AND EXISTENCE AND SCIENTIFIC-CULTURAL AND MORAL- SPIRITUAL CIVILIZATIONAL CONCEPTUAL FRAMEWORK OF KHACHATUR ERZRMETS'I

Nerses Kocharyan

*PhD student at Kh. Abovyan
Armenian State Pedagogical University*

SUMMARY

The civilizational-enlightenment, scientific-cultural and moral-spiritual creative and educational activities of Khachatur Erzrumets'i in the Ottoman Empire in the 17th-18th centuries focused on finding adequate solutions for the issue of Armenian identity and existence. His ethical conceptual framework has great significance for the maintenance of the national spiritual self-identity and for the development of national self-awareness and civilized lifestyle. The framework embraces a comprehensive social theory that reflects a complex unity of public life with all of its constituent elements and is focused on a societal reform.

Key words: identity, existence, morality, spiritual, ethical conceptual framework